



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 08 » սեպտեմբերի 2017 թ.
ք.Գավառ

N 507-Ա

ՄԱՆՈՒԿ ՆՈՐԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով, 4-րդ մասով և 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Մարտունու սոցիալական աջակցության տարածքային գործակալության սոցիալական աջակցության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 64-3.2-12) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 6 որոշումը, եզրակացությունը և Մանուկ Նորիկի Ղազարյանի դիմումը՝

Հրամայում եմ՝

1. 2017 թվականի սեպտեմբերի 8-ից Մանուկ Նորիկի Ղազարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Մարտունու սոցիալական աջակցության տարածքային գործակալության սոցիալական աջակցության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 64-3.2-12) պաշտոնում՝ նրան ազատելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 64-4.1-16) պաշտոնից:

Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



(Handwritten signature)

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ